



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ Ս. ԾՆՆՂԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՒ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

- ԳԱՊԱՅԵԱՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՄՈԼԸ 500,000 ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԸ  
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻՆ
- ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ ՊԻՏԻ ԿՈՉՈՒԻ «ԱԶԳ. Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԱՐԻ  
ԳԱՊԱՅԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ»

Մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Արեւմտեան մեր Թեմի ժողովուրդը ապրեցաւ հոգեկան ցնծութեան օրեր, որոնք սկսան ճրագալոյցի հոգեպարար արարողութիւններով, ապա նաեւ Ս. Ծննդեան տօնին օրը հանդիսաւոր Ս. Պատարագով, ջրօրհնէքի արարողութեամբ ու Առաջնորդ Սրբազանին՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի Ամանորի ու Ս. Ծննդեան աւանդական ընթրիքով:



Շարունակելով նախընթաց տարիներու գեղեցիկ աւանդութիւնը, բազմահարիր ազգայիններ ու ներկայացուցչական դէմքեր ընդառաջած էին Ընթրիքի հրաւերին: Երեկոն պսակուեցաւ աննախընթաց յաջողութեամբ, նաեւ Ազգ.

Առաջնորդարանի բազմաճիւղ առաքելութեան ի նպաստ նիւթական զօրակցական

արտայայտութիւններով: Իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն եւ գնահատանք արձանագրեց բոլոր բարերարներուն, հովանաւորներուն ու ծառայողներուն: Ի շարս այլ անակնկալներու, Առաջնորդ Սրբազանը ուներ գեղեցիկ անակնկալ մը եւս: Արդարեւ, Թեմիս ազգային բարերարներու մեր փաղանգը հարստացաւ նոր անունով մը. Տեր եւ Տիկին Տոքթ. Վաչէ եւ Շուշիկ Գապայեան ամուլը, Սան Ֆրասսիքոյէն, 500,000 (հինգ հարիւր հազար) տոլարի իշխանական նուիրատուութիւն մը

կատարեց Ս. Նահատակաց Ազգ. Նախակրթարանին եւ Ֆերահեան Երկրդ. վարժարանին: Այս ուրախ առիթով, Առաջնորդ Սրբազանը, յանուն Թեմիս Ազգային Վարչութեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինին, վարժարանի տնօրէնութեան եւ Ուսումնական Մարմինին, պաշտօնապէս յայտարարեց, որ վարժարանին Նախակրթարանի բաժինը այսուհետեւ պիտի կոչուի «**ԱԶԳ. Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ՄԱՐԻ ԳԱՊԱՅԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ**», ի յիշատակ բարերար ամուլի մօր: (Յաւելեալ մանրամասնութիւններ՝ հետագային:)

## **PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER CULMINATES WITH GREAT SUCCESS**

- CABAYAN FAMILY DONATES \$500,000 TO HOLY MARTYRS ELEMENTARY
- ELEMENTARY WILL BE RENAMED "HOLY MARTYRS MARY CABAYAN ELEMENTARY SCHOOL"

On the evening of January 6<sup>th</sup>, 2010, the Feast of the Nativity and Theophany of our Lord, hundreds of Prelacy supporters and friends gathered at "Bagramian" Hall of Montebello's Holy Cross Cathedral for the annual Prelate's Traditional New Year and Christmas Dinner.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, expressed his thanks and appreciation to all the sponsors and donors for their continued support and encouragement. The Prelate then stated that among the evening's surprises was a special announcement; Dr. and Mrs. Vatche and Shoushig Cabayan of San Francisco had donated \$500,000 to Holy Martyrs Elementary and Ferrahian High School in memory of their mother Mary Cabayan. On behalf of the Executive Council, Board of Regents of Prelacy Schools, and the school's administration and board, the Prelate officially announced that the elementary section will be renamed "**HOLY MARTYRS MARY CABAYAN ELEMENTARY SCHOOL**". Details to follow.

\*\*\*

## **Ս. ԾՆՈՒՆԴԸ ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԻՆ ՄԷՉ**

Երեքշաբթի, 5 Յունուարին, Ս. Ծննդեան ճրագալոյցի առիթով Ս. Պատարագ մատուցուեցաւ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ եւ Ս. Զաղորդութիւն տրուեցաւ մեր հաւատացեալ ժողովուրդին: Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ եւ տուաւ օրուան խորհուրդը փոխանցող պատգամ մը:



Չորեքշաբթի, 6  
 Յունուար 2010-ին, Ս.  
 Ծննդեան ու  
 Աստուածայայտութեան  
 տօնը մեր Թեմի բոլոր  
 եկեղեցիներուն մէջ  
 կշուեցաւ  
 հանդիսաւորապէս:

Մեր հաւատացեալ  
 ժողովուրդը խումներամ  
 ներկայութիւն եղաւ  
 սրբազան պատարագին եւ  
 Յիսուսի Սկրտութեան  
 հոգեպարար  
 արարողութեան: Առաջնորդ

Սրբազանը Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս Ս.  
 Ծննդեան պատարագը մատուցանեց եւ Ս. Ծննդեան ու  
 Աստուածայայտութեան խորհուրդը վեր առնող պատգամ մը փոխանցեց  
 հաւատացեալներուն, անոնց մաղթելով բարի տարի եւ ուրախ տօնական  
 օրեր: Ս. Պատարագի աւարտին Առաջնորդ Սրբազանը կատարեց  
 ջրօրհնէքի արարողութիւն:



Յինգշաբթի, 7  
 Յունուարին, Ս. Ծննդեան  
 տօնին յաջորդող օրը,  
 համաձայն հայ եկեղեցւոյ  
 աւանդութեան, մեր  
 հանգուցեալ  
 հարազատներուն  
 յիշատակի օրն է: Այս  
 առիթով, յիշատակի  
 հոգեհանգիստ  
 կատարուեցաւ Յովիվուտ  
 Յիլզի Forest Lawn  
 գերեզմանատան Hall of

Liberty սրահին եւ Կլենտէյլի Forest Lawn գերեզմանատան Church of  
 Recessional եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10-ին, գլխաւորութեամբ  
 Առաջնորդ Սրբազան Յօր եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն:

Մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, Ուրբաթ, 8  
 Յունուարին, Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ, Առաջնորդ  
 Սրբազան Յօր նախագահութեամբ եւ Թեմիս հոգեւոր հովիւներուն  
 մասնակցութեամբ, յատուկ արարողութիւններ տեղի ունեցան Mission Hills-ի  
 «Արարատ Տան» համալիրին մէջ:

Առաւօտեան աղօթք մատուցուեցաւ հաստատութեան հիւանդանոցի  
 բաժնին մէջ: Ապա, կատարուեցաւ Ջրօրհնէքի աւանդական  
 արարողութիւն, հաւաքական խոստովանանք. քահանայ հայրերը Ս.

Հաղորդութիւն տուին ներկաներուն, որմէ ետք բոլորը միաբերան երգեցին «Կիլիկիա» մաղթերգը:

Այնուհետեւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ «Արարատ Տան» մատրան մէջ: Պատարագեց եւ քարոզեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Արտակ Թիւ. Տեմիրճեան:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց հաստատութեան պատասխանատուները, տնօրէնութիւնը, պաշտօնեութիւնը եւ նուիրեալ ծառայողները, եւ շնորհաւորեց բոլորին Ս. Ծննդեան տօնը: Ան նաեւ շնորհաւորեց «Արարատ Տան» բնակիչներուն Նոր Տարին, աղօթելով ու մաղթելով բոլորին առողջութիւն, ցաւերու թեթեւութիւն եւ երջանիկ օրեր:

Արարողութեանց աւարտին, հոգեւորականաց դասը սրահ առաջնորդուեցան, ուր «Արարատ Տան» բնակիչներուն եւ պատասխանատուներուն հետ ունեցան սիրոյ ճաշ:

## **CELEBRATION OF THE FEAST OF THE NATIVITY AT THE PRELACY**

Throughout this past week, the Feast of the Nativity and Theophany of our Lord was ceremoniously celebrated at Prelacy Churches with Divine Liturgy, the blessing of water, and the Prelate's Traditional New Year and Christmas Dinner.

The celebration began with Divine Liturgy on Tuesday, January 5<sup>th</sup>, 2010, the eve of the Feast of the Nativity. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino.

On Wednesday, the Prelate celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale on the Feast of the Nativity and Theophany, where he also delivered the sermon and conducted the blessing of water ceremony.



On Thursday, January 7<sup>th</sup>, Memorial Day, requiem services took place at Forest Lawn Hollywood Hills Hall of Liberty and Forest Lawn Glendale Church of the Recessional, presided over by the Prelate and with the participation of clergy members.

On Friday, January 8<sup>th</sup>, in keeping with tradition, Christmas Divine Liturgy was celebrated at Ararat Home in Mission Hills. The day began

with morning prayers in the nursing facility, presided over by the Prelate and with the participation of clergy. The blessing of water also took place and

residents were offered Holy Communion. The service concluded with the collective singing of "Giligia".

Divine Liturgy was then celebrated at the Ararat Home Chapel. The celebrant was Rev. Fr. Ardak Demirjian.

The Prelate commended the administration and staff and conveyed his well wishes for a healthy and prosperous new year to them and to the residents.

Following the service, the clergy were hosted to a reception with the administration and residents.

\*\*\*